

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Թր.

Վեցամսեայ 6 Թր.

ԱՐՏԱՍԱՀԱՍ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան ... 12 Թր.

Վեցամսեայ ... 7 Թր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրաբ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ո Ւ Կ

Խանութան «ոդր»
20 սանթիմ



ԺՐԱԿՈՒՄ

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВЪСТНИКЪ

„Iравунк“

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրութիւր

rev. Pere G. Ralevskan
Kengasee Jle 4
Nieme

Չատկական տօներու առ-
թիւ յառաջիկայ Զորեքշաբթի
իրաւունք չպիտի հրատարակուի :

ՏՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թերթերու հաւաստումին նա-
յելով Ռուսիոյ բառըմանը (Տումա)
մեծաւ մասամբ սահմանադրա-
կան-աւստական կուսակցու-
թեան պիտի կազմուի, ուրիշ
կուսակցութիւններ՝ որոնք աւելի
միապետութեան հակամէտ են,
յաջողութիւն չեն գտներ ընտ-
րութեան մէջ. իսկ ծայրայեղ-
ները արդէն չեն մասնակցիր:
Գալով կառավարութեան, Արշա-
լոյս ի վերջին խմբագրականը
հետեւեալ դրութեան մէջ կը ներ-
կայացնէ.

«Կառավարութեան բռնած
դիրքը և մանաւանդ նրա գոր-
ծողութիւնները գեկտեմբերից
յետոյ մինչեւ օրս՝ օր ըստ օրէ
քայլ առ քայլ բաժանեցին նը-
րանից նաև այն բարեսիրտ ան-
ձանց, որոնք որ և է յոյս ու
հաւատ ունէին դէպի Վիտտէ-
Պուրնովի քաղաքականութիւնը:
Ինքը կառավարութիւնը կարծես
դիմաժամ ստուարացրեց իրենից
երես շուռ տողներ թիւը և
հասցրեց այն աստիճանի, որ
այսօր նա կանգնած է ողջ ռուս
ժողովրդի առաջ մեն մենակ. նա
բարեկամներ չունի ոչ պահպա-
նողականների շարքերում ոչ և
մանաւանդ ազատամիտների. ո-
րոնց աչքում դեռ ևս 3—4 ամիս
առաջ նա համարում էր հոկ-
տեմբեր 17-ի ազատութիւնների
հեղինակ:

«Մասկայի անօրինակ ջարդերը,
Շուրջ-Բալտեան Օրլովեան գըն-
դակահարումները, գիւղացիական
շարժման դէմ գործադրուած սուս-
կալի միջոցները, մամուլի և տը-
պագրական գործի ազնիւ եւ ճա-
կատով գործիչների վերաբեր-
մամբ ձեռք առած խիստ միջոց-
ները, 75.000 քաղաքական բան-
տարկեալները և դրանց մեծ մա-
սի աքսորը դէպի հիւսիսային

նահանգները, որպէս և սահմա-
նադիր աւստականների ժողով-
ների վերաբերմամբ գործադրու-
ած անհրեժի խտրութիւնները, ցոյց
տւին ռուս ժողովրդին առանց
կուսակցութիւնների տարբերու-
թեան՝ թէ դէպի ուր է առաջ-
նորդում կառավարութիւնը Ռուս
սաստանին եւ ինչ դիտումներ ու-
նի նա ապագայում. եւ ահա ողջ
Ռուսաստանը քայլ առ քայլ ե-
րես դարձրեց այն կառավարու-
թեանը, որը ինքն էր, որ առա-
ջինը դաւաճանեց Միապետի չը-
նորհած ազատութիւններին եւ
նրանց խայտառակ կերպով ոտ-
նատակ տւեց. Այդ օրից կառա-
վարութեան բաղդը մի անգամ
ընդմիջտ որոշուած էր և այդ ո-
րոշողը եղաւ այն ընդդիմադիր
արամադրութիւնը, որ բռնեց
բոլորին և որը արտայայտուած է
այսօր ընտրական շրջաններում:

«Ռուս ընտրողը, ձայնատուն
բնականաբար յարում է կուսակ-
ցութիւնների նրան, որը ամենից
աւելի ցոյց է տալիս իր անվըս-
տահութիւնը ներկայ կառավա-
րութեանը, իսկ այդ կուսակցու-
թիւնների մէջ ամենից առաջ
սահմանադրա-աւստականներին,
որպէս գոյութիւն ունեցող և
ընտրութիւններին մասնակցող
կուսակցութիւններից ամենա-
ձախակողմեաններին:

«Հասարակութեան և ժողովրդի
տրամադրութեան այս բեկումը
ձախ, նշանակալից է. նա է որ
բարձրացնելու է դէպի ապագայ
Պետական Դուման տաժած ան-
վըստահութիւնը, իսկ իրան Պե-
տական Դումային մօտեցնելու է
այն սպառնալիքներին, որ ունի
նրանից ռուս առաջադէմ միտքը,
որը արդարացի կերպով ցան-
կանում է Պետական Դումայի մէջ
տեսնել ժողովրդական կատարեալ
ներկայացուցչութիւն՝ վճռող,
բեկանող իրաւունքներով, հրա-
մայող իրաւասութեամբ, ուրիշ
խօսքով՝ պարլամէնտ ամենաբար-
եկրոպական իմաստով:»

ԿՈՎԱՍՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱԳՈՒԻ նահանգային գատարանը
Մարտ 16-ին սկսած է անցնալ տար-
ւոյ փետրվարի 6—9 դէպքերու ժա-
մանակ գործուած ոճիրներու քննու-
թիւնը: Ամբաստանուած են չատ մը
թուրքեր, որոնց ոճրագործութիւնները
հաստատող ամբաստանագիրը նախ կար-
դացուեցաւ: Ամբաստանողներն են
Աղաժիան եւ Բէլուէկեան: Ոճրա-
գործ թուրքերը անխտիր սպաննած
են կին, տղայ եւ ծեր, պարզապէս
ասոնց հայ ըլլալուն համար: Դատա-
կան հարցաքննիչին կազմած ամբաս-
տանագիրը կը ջանայ ապացուցանել
թէ Պագուի հայ-թրքական ընդհա-
րու միներ առաջ եկած են վերջին
3—4 տարիներու մէջ այդ քաղաքի
խալած եւ հայ ժողովուրդներուն մէջ
փոխադարձ գործուած անհատական
սպաննութիւններէն, որոնք վերջապէս
ընդհանուր պառակտումի յանգեցան:
Դատավարութիւնը կը յարունակուի
ՇՈՒՇԻ ի գաւառապետ Ֆրէյէիը
խաղախներով եւ թնդանթներով խու-
զարկութիւններ կը կատարէ հայ գիւ-
ղերը, զէնքեր կը գրաւէ, ծանր ֆու-
գանքներ կը պահանջէ եւ չատ բըռ-
նութիւններ ի գործ կը դնէ: Սար-
գիսաչէն գիւղէն քանի մը տուններ
ոմբակոծած է:

ԳԱՆՁԱԿ—Այս գաւառի մէջ թուր-
քերը տակաւին չեն դադարեցուցած ի-
րենց ոճրագործութիւնները: Մարտ
23-ին Դանձակի կայարանին մօտ
թուրքեր յարձակած են խաղախի մը
վրայ, զայն վիրաւորած եւ հրացանը
առած. սակայն խաղախներն ալ երբ
զինեալ թուրքերու կը հանդիպին անոնց
զէնքերը կը գրաւեն ու կը ձերբակա-
լեն:

ԳԱՆՁԱԿԷ մարտ 19-ին կիմացնեն
թէ նոյն օրը Աղտամի թուրքերը
յարձակած են վուրկունով գացող հա-
յերու վրայ: Խաղախները կրակ ըրած
են թուրքերուն վրայ, որոնցմէ եր-
կուքը սպաննած եւ հինգը վիրաւո-
րած են:

Բիւրտ խումբեր սահմանը անցնե-
լով անցնալ շարժու երկու անգամ
թիւրք գիւղացիներու անասունները
տաբեր են:

Անցնալ Նոյեմբերին Ղարա-Երի այ-
գիին մէջ հայ մշակներ սպաննող
թուրքերէն 20 հոգի քանաւարկուած
ըլլալով անոնց գատարութիւնը
պիտի կտտարուի ի մօտոյ: Կառավա-
րութիւնը հայ վկաներ բանտը տա-
նելով, բազմաթիւ կալանաւորներու
մէջ հագտակել տուած է ոճրագործ-
ներու իսկութիւնը:

—Տփղիսէն Մանգլիս գացող սուր-
հանդակին վրայ վեց զինեալ մարդ
յարձակած են: Թղթատարը եւ կառա-
պանը սպաննուած են եւ ոստիկանը վի-
րաւորուած է, բայց պայուսակները
անվնաս մնացեր են: Ոստիկաններ կը
հետապնդեն չարագործները որոնցմէ
մէկը վիրաւորուած ըլլալով, արեան
հետքեր կը ձգէ իր ետեւը: Նոյն տե-
ղը քանի մը օր ալ աւելի անալ ուրիշ
սուրհանդակ մը եւս յարձակուած կրած
էր:

—Թուրքեր Տփղիս բերած ըլլալով
ոչխարներ ծախելու համար, հայերը
ճանչցեր են թէ անոնց մէկ մասը Ար-
ղուժանեաններու ձմեռանոցէն քուած
ոչխարներն են: Ընկեր են ոստիկանու-
թեան, սա ձերբակալու է թուրքերը
եւ ճանչցուած ոչխարները յանձնե-
ր է Հայերուն:

ՎՐԱՑ ԲԱՆԱԲԱԿԱՆ ԴԱՆԱՆԱԲԸՐ

Վրացի իշխան Դադեչկիւիանին
կառկազ թերթին ուղղած իր հե-
տեւեալ նամակով կը գծէ Վրաց
քաղաքական դաւանանքը որ ինչ-
պէս կըսէ իշխանը, իր ազգի
մեծամասնութեան դաւանանքն
է եղեր:

Պ. Խմբագիր.
Վրաց հասարակութեան քաղաքական
տրամադրութիւնը շարունակուած է ա-
ռաջ բերել զանազան մեկնութիւններ
եւ այդ մեկնութիւններին համապա-
տասխան «միջոցներ» ու «յարաբերու-
թիւններ»:

Ոչ «ուղիչներն» խելքի բերել է
դիտաւորութիւնս եւ ոչ էլ սթափցնել
մեր «ձագուկներին», որոնք կարծում
են թէ աշխարհը իրանց ծնելուց յետոյ
է միայն սկսել գոյութիւն ունենալ:
արդարութիւնը պարզելու համար է,
որ խնդրում եմ տեղ տալ ձեր թերթի
էջերում այդ նամակիս, որ, համար-
ձակուած եմ կարծել, իմ հայրենա-
կիցներին մեծամասնութեան քաղաքա-
կան դաւանանքն է արտայայտուած:

Ա. Երեւանի իրանց ծնողների հետ
կապող անդիմադրելի բնական զգաց-
մունքները կապում են մեզ հայրենի
երկրի, հայրենի ազգութեան հետ:
Ինչ չհայ է որ սպասելու լինենք օտար
երկրից, մենք այնուամենայնիւ չենք
կարող մեր հայրենիքը փոխել նրա հետ,
ինչպէս որ մարդ նորմալ պայմաննե-
րում չի կարող փոխել իր ծնողներին:
Այդ բնազդը, որ յատուկ է ամեն մի
չփչացած մարդու՝ թագաւոր լինի նա

թէ հովիւ , դարձնում է մեզ վրացի ազգասէր :

Բ. Միեւնոյն ժամանակ մենք հեռու ենք այն մտքից , թէ երբ եւ ինչեք վրաստանը կարող է դառնալ քաղաքականապէս անկախ մի միութիւն : Դրա նկատմամբ անողոք պատմական օրէնքները , որ վեր են մարդու կամքից , նախօրոք որոշել են նրա վիճակը , ստիպելով նրան 100 տարի առաջ փրկութիւն փնտռելու ուստի ժողովուրդի հետ միանալու մէջ , եւ մենք , ներկայիս վրացի ազգասէրներս , մեր հայրենիքի շահերն ի նկատի ունենալով , մեր պարտքն ենք համարում այդ միութիւնը պահել , պահպանել մինչեւ մեր կեանքի վերջը :

Գ. Կողմնակից լինելով վրաստանի եւ Ռուսաստանի անխախտ միութեան , մենք այնուամենայնիւ կարծում ենք , որ ինչքան էլ որ ընդհանուր պետական ռեֆորմ ազատամիտ լինի , վրացիք չպիտի ունենան իսկական քաղաքացիական ազատութիւն եւ չպիտի կարողանան զարգացնել իրանց հոգեկան կարողութիւնը , եթէ նրանց չտրուի ազգային ինքնուշուրթութեան սկզբունքների վրայ հիմնւած ինքնավարութիւն :

Այդ երեք կէտերը պարզ օրոշում են մեր ազգասիրութեան բնաւորութիւնը :

Դառնալով աւելի ընդհանուր խնդիրներին , մենք գտնում ենք :

Դ. Պետութիւնը չի կարող լաւ կառավարել , եթէ կառավարութեան գործին չմասնակցի ժողովուրդը : Որքան աւելի լայն եւ իրականաբար լինի ժողովուրդական ներկայացուցչութիւնը , օրէնսդրական եւ գործադիր իշխանութեան մէջ , այնքան աւելի երաշխաւորութիւն կը լինի հասարակական եւ մասնաւոր կեանքի բարգաւաճման համար :

Ե. Անհատների եւ դասակարգերի մէջ եղած խտրութիւնը առնասարակ , եւ մասնաւոր օրէնքի առաջ , ներկայիս ամենախոշոր չտրիքներից մինն է : Այդ պատճառով , վերացնելով ամեն տեսակ դասակարգային եւ այլ արօնութիւններն ու սահմանափակումներ , օրէնսդրութիւնը պիտի հաւասարեցնէ բոլոր քաղաքացիների իրաւունքները :

Զ. Անհատների եւ դասակարգերի անհաւասարութիւնը բխում է գլխաւորապէս նիւթական միջոցների չափից

դուրս անհաւասար բաշխումից : Բայց որովհետեւ պետութեան ներքին կեանքում ոչ մի անտեսական խնդիր չի կարելի լուծել յեղափոխական ճանապարհով , ուստի հարստութեան բաշխման անհաւասարութիւնը հարկելու գործում թոյլ տանք մի միակ ճանապարհ — էվոլյուցիայի ճանապարհը :

Ահա՛ այս վեց կէտերի մէջ է ամփոփւում ընդհանուր գծերով մեր քաղաքական դժանդքը եւ հազիւ թէ որ եւ է վարչական լիակատարութեանը կամ սպառնալիքը , որ առատ չափով է տերրորդ կարողանան դրանից մի բան փոխել :

Գալով մեզ , կա՞յ մէկը որ այսօր կարող ըլլայ մեր ազգին մեծամասնութեանը անունով Հայոց «քաղաքական դաւանանքը» որոշել :

Ք Ի Ւ Ր Տ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Պօլսոյ թերթերը սկսած են այս օրերի ամբողջ էջեր սեղանի՝ գովեստներ ու փառաբանութիւններ կարգաւորել Սուլթանի՝ Րիթվան փաշան սպանող չորս Գիւրտերու դատավարութեան օրոքը : Զէ կարելի երեւակայել այս աստիճան հրապարակային խեղկատուութիւն որ կառավարութեան մը կողմէ պաշտօնապէս գործուի եւ ի ձայն փողոյ հռչակուի իբր լուրջ եւ արդարադատ գործ մը , ամբողջ կայսրութեան մը տասնեակ միլիոններով ժողովուրդ խաբիւր եւ չլացնելու նպատակաւ միայն :

Թրքական թերթերու մէջ դատավարութեան արձանագրութիւնները աչքէ անցնողներ կը տեսնեն թէ՛ ըսպանութիւնը գործադրող չորս բեռնակիր Բիւրտերը դատարանի առջեւ կը յայտարարեն թէ զիրենք թելադրող եւ ստիպման տակ այդ ոճիւրդ գործադրել տուողները Պէտրիան օղլու Ապտիւլ-Րազաֆ պէյը եւ Ալի Ծամիլ փաշան են եղած . այդ չորս բեռնակիրները կը յայտարարեն նաեւ թէ «եթէ մենք Րիթվան փաշան չըսպանէինք , Պէտրիանները մեզ ըսպանել կուտային , ինչպէս որ շատ

անգամ պատահած է , որովհետեւ Անատոլի մէջ այդ Պէտրիաններու «հիւք-մը» անտահման է . անոնք ազատօրէն ուզածնին կը սպաննեն եւ ուղածնին կը պաշտպանեն : » Սպաննինքրու այս իմաստով ըրած յայտարարութիւններէն զատ ուրիշ փաստեր եւ վկայութիւններ ալ եկած են հաստատել Պէտրիաններու ուղղակի մասնակցութիւնը ու թելադրութիւնը նոյն ոճիւրդ գործադրութեանը համար : Հետեւաբար տարրական արդարասիրութիւնը կը պահանջէր եւ թուրքիոյ մէջ այսօր — թիւն ունեցող օրէնքները կը տրամադրէին որ դատավարութեան ընթացքին ոճրագործներուն նըստարաններուն առջեւ տեսնուէին բուն թելադրիչները , որոնք ըստ չորս քիւրտերու յայտարարութեանց «ամիր միւճպի»ներ եղած են : Սակայն Համիտական արդարադատութիւնը (1) չուզելով իր ֆալսիֆները պարզ ոճրագործներու կարգը դասել , զանոնք ազատա՛յէ աքսորի պատրուակին տակ : Օսմանեան դատարաններուն մէջ Սուլթան Համիտի օրով եթէ մագի չափ արդարադատութեան հոգ տարուէր , Ապտիւլ-Րազաֆի եւ Ալի Ծամիլի աքսորը քանի մը օր կը յետաձգուէր ու անոնց ներկայութեամբ ոճրին պարագաները լաւ մը կը լուսաբանուէին եւ հաւանականաբար ուրիշ ոճրիներ ալ մէջտեղ կ'ելլէին , թերեւս այս ոճրագործութեանց ծայրը մինչեւ Երուզ հասնէր : Թուրք թերթ մը արդէն կը յայտարարէ թէ աքսորուած Պէտրիան-օղլուները շատ մը ուրիշ ոճրիներու հեղինակը ու թելադրիչը եղած են :

Այս աստիճան յայտնի ապացոյցներ եւ օրէնքի տրամադրութիւններ մէջտեղ ըլլալով հանդերձ ոճրին բուն հեղինակներուն առանց դատավարութեան ենթադրութեան Պօլսէն հետազոտելու տեղ թուրք թերթերը տրդարադատութեան աստուածացում կը հռչակեն կամ ստիպում են հռչակել ի փառս Սուլթան Համիտի , որուն սիրականները (ֆալսիֆ) Րազաֆի եւ Ծամիլի պէս չքանչանալ ոճրագործներ են միայն , իսկ ինք տիտղոսաւորեալ «կարմիր Սուլթան» կամ «Մեծ Մարգասպան» :

Այդպիսին հարկաւորները կը հաշուուին այսօր Ալպանիոյ եւ Հայաստանի մէջ , ուր անոնք , այդ ստեղծարար ոճ

բաղործները , կուրծքերին Համիտական չքանչաններով եւ զինուորական աստիճաններով սրգանեմ կը շրջին իրենց շուրջը միայն մահ ու աւեր սփռելով , առանց պատասխանատուութեան : Ահա այս է գաղանիքը Հայկական եւ Մահադանական նահապետներուն մէջ քառօրե դարէ ի վեր յարածուն ոճրագործութիւններուն :

Պէտրիանը ոճրագործներուն աքսորի անուան տակ , առանց օրինական դատապարտութեան Պօլսէն հետազոտելուն մէջ Սուլթանը ուրիշ նպատակներ ալ ունի . անոնք քիչ յետոյ իրենց ցեղակիցներուն մօտը պիտի դրկուին անչլուկ եւ հոն ի հաշիւ Սուլթանին պիտի կազմակերպեն հայկական շոր կոտորածներ : Ալիզբէն ի վեր Սուլթան Համիտ իրեն սկզբունք ընտրած է ազգեցիկ ոճրագործները դատապարտութենէ փրկել ու եւ է ձեռով որպէս զի զանոնք մեծագոյն ոճրիներու գործիք ընէ ի հաշիւ իրեն :

ՄԵՐ ԹԵՐԹՈՆԸ

«ԿԱՐԻՊ ԱՍՊԵՐ»

Ներկայ թիւով կը սկսինք ՏԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆԻ գրած մէկ նոր երկասիրութիւնը աղգային կեանքէ առնուած :

«Իրաւունք» ի ընթերցողներուն արդէն ծանօթ է Շիտանեան իր ԹԻԱՊԱՐՏԸ երկասիրութեամբ , որ իբր թերթին այնչափ ախորժանօք կարգացուելէ յետոյ իբրեւ գիրք ալ տպագրուեցաւ շատնու խնդրանքով :

ԿԱՐԻՊ ԱՍՊԵՐԸ որ թէեւ «Թիապարտին նման ստուար հատոր մը չը կազմէր , գիրքի չափով վերածնէր , այլ միայն թերթին մէջ թերթօնի ձևով պիտի հրատարակէր : Ուստի այս առթիւ կաղաքարարենք մեր յարգոյ ընթերցողներուն որ «Իրաւունք» ի թիւերը չը կորսնցնեն , եթէ ոչ

Շիտասարդը բացաւ Թուրքիոյ ու ահա՛ ինչ որ կարգաց անոր մէջ :

Վան-քաղաք 25 օգոստ. 1885
Մեծապատիւ
Ռէս Մուրատ կարիպենց
Ա. . . գիւղ

Գրաբեր՝ Ախպէր Փանոս ձեզի պիտի յանձնէ այս երկտող՝ գրութիւնս , որով կը յայտնեմ թէ մուրհակին պայմանաժամը լրանալու մօտ է : Եթէ հարկ եղած դրամները չը պատրաստէք ես պիտի հարկաւորուիմ կառավարութեան զինուոր եւ այս անգամ տունդ ու կարասիներդ ծախելու :

Արդ , թուականէս սկսեալ երեք օր միայն պայմանաժամ կարող եմ տալ : Առանց յապաղելու քաղաք եկէք եւ գործերիդ կարգադրեցէք :

Ընդունեցէ՛ք բարեւներս :
Բարեացակամօ՛ք Գաբրիէլ Ծիրվանենց :

—Որքան է այս պարտքը , հարցուց երկտասարդը՝ ծայրէ ի ծայր կարդալէ յետոյ :

—Ի՞նչ գիտնամ . . . կակաղեց Ռէս

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԿԱՐԻՊ ԱՍՊԵՐ . . .

Իրիկուն էր . հորիզոններու ետին ծածկուող արեւը կրակի գոյն ցոլք մը սփռած էր երկնամուտի վրայ , որ լուրթ կապոյտ մշուշի մը տակ կը գողղողար կարծես :

Այդ պահուն՝ Վանի քաղաքէն երեք ժամ հեռաւորութեամբ՝ Ա. . . գիւղին մէկ անշուք թաղին մէջ , ծերունի մը կեցած էր ցածուկ ու փիլիկած տունի մը դուռը եւ՝ աչքը չորս ըրած՝ կը դիտէր փողոցէն անցնողները :

Յիսունն անցած էր այս ծերունին . միջահասակ , նիհարակազմ ու տկարացած կերեւոր : Անոր կերպարանքը նման էր ժանգոտ երկաթի մը ու աչքերը՝ խորը ու փոս ինկած էին կոպեւորուն ներքեւ : Երկայն ու հնամաշ վերարկու մը հագած էր ու գլուխը տրած

էր կաշի կտրած արախի մը , որ կիշնէր իր կնճուռած ու ճաղատ ճակտին վրայ : Զեռքը հաստ ու կոռ գաւազան մը կար , որուն կրթնած էր բոլոր մարմնովը :

Յայտնի էր որ ծերունին մէկու մը կը սպասէր , որովհետեւ ակամայ շարժումներ կընէր ու երբեմն ալ ինքնիքէն արտունջներ կը մուտար :

Կամաց կամաց մուծը կը կոխէր : Երբ ներս մտնելու կերթար , ահա՛ իր զրացի Փանոս քովը մօտեցաւ ու ըսաւ . —Նա՛ , Ռէս Մուրատ , էս թուրք Ծիրվանենց Գաբրիէլ Աղէն տուեց :

Ու ծերունին յանձնեց գոց նամակ մը :

Թշուառ մարդը շուտով մը տունը գնաց ու սրահներէն մէկուն գամուած հողէ ճրագը վառեց ու սկսաւ կարդալ այդ գրութիւնը : Այնքան յուզուած էր , որ չը լսեց դուռին բացուին ու քսաներկու տարեկան , յաղթանգամ ու բարձրահասակ երիտասարդը մը ներս մտնելը :

—Ի՞նչ գրութիւն է այդ , հա՛յր իմ , հարցուց երիտասարդը զողողալով :
—Ոչինչ . . . թոթովեց ծերունին

ու ձեռքին մէջ ճարտկեց զայն :

—Ինչպէ՞ս «ոչինչ» . . . Ախպէր Փանոս քաղաքէն նամակ մը բերած է եղբր , չէ՞ . . . :

—Իերա՛ւ . . . բայց նամակ չէ՛ր :

—Հապա՞ :

—Երկտող գրութիւն մըն էր :

—Ուսկի՞ց :

—Սա Ծիրվանենց Գաբրիէլ Աղայէն :

—Աղէ՛կ . ուրեմն ինչո՞ւ կը ծածկէս ինէ . . . գաղտնիք մըն է :

—Ամենեւ ի՛ն . . . միայն թէ՛ չեմ

ուզեր որ ատանկ բանի մը համար սիրտը ճմլես , զաւա՛կս . . . Հառաչեց ծերունին՝ չկրնալով աչքերու արցունքները զսպել :

—Յայտնէ՛ , հա՛յր իմ , չեչտեց երիտասարդը՝ հետաքրքրութենէն խղճուած ձայնով մը :

Ծերունին , որուն Ռէս Մուրատ կը կոչէին , զողողուն ու հալուժալ դարձած ձեռքը սրբելի զաւակին երկնցուց ու յանձնեց անոր ճարտկուած թուղթը :

—Ա՛խ , քանի որ կը ստիպես ինձի , մըմնջեց ան՝ արցունքները սրբելով , կարդա՛ ու հասկցի՛ր մեր վիճակը :

յետոյ պիտի զղջան «Կարիպ Ախ-
պէր»ը ամբողջ շունենալնուն հա-
մար :

ՏԵՐ ԴԵՒՈՆԻ ԵՊՍ. ՇԻՇՄԱՆԵԱՆ

ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ

ՀԱՆԴԵՐՁ ՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Ս Ո Ւ Ր Բ Տ Ե Ղ Ե Ա Յ



Լրագրական կանխահաւ նկատողու-
թիւններու հետեւանօք՝ շատ քիչ ազգա-
յիններու կողմէ եղած թախանձանաց
առջեւ տեղի տալով, անցեալ Փետրո-
ւար ամսուն մէջ սկսուած է հրատա-
րակութիւնը Հանգուցեալ Տէր Դեւոնդ
Եպիսկոպոս Շիշմանեանի վերոյիշեալ
երկասիրութեան, որ 55 էն 60 պրակի
կրնայ հասնիլ որոնց երեք պրակները
արդէն հրապարակ ելած են :

Հանգուցեալ Դեւոնդեան Հեղինա-
կին գրաւոր յայտնած հաւանութեամբ,
ներկայ հրատարակութեան դուռ հա-
սոյթէն, կարեւոր մաս մը « Բարե-
գործական նպատակներու » պիտի յատ-
կացուի, այդ պատճառով յատկապէս
(500) հինգ հարիւր օրինակ կը պատ-
րաստուի, անոնց վաճառման արդիւն-
քը՝ 30,000 զրդ. ողջ առ այդ նպա-
տակ գործածուելու համար :

Արդի պահանջմանց բերմամբ՝ փափա-
քելի է որ այդ գումարէն օգտուին,
կովկասի արկածները, Գահրէի Հայ
Բար. Միութիւնը եւ թուրքոյ այլ եւ
այլ տեղերու բանտերուն մէջ հեծե-
ծող կտրազդ բանտարկեալները՝ որոց
դառն կացութեան անձին փորձով ծա-
նօթացած է Սրբազան հեղինակը : Այս
նուէրին գործադրութեան եւ պրակնե-
րու ժամ առաջ սպասման քանարու հա-
մար այժմէն պէտք է բանակցիլ Մաս-
նախմբի Գարաւոր Տ. Եղիշէ Թո-
րոսեանի հետ :

Կանխիկ բաժանորդագրութիւնը Ե-
պիսկոպոսի համար 40 զրդ. ողջ է, իսկ
արտասահմանի համար 12 ու կէս Ծր. :
Իւրաքանչիւր պրակ մէկ զրդ. ողջ կար-
ծէ :

«ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔ»ին վերաբերեալ ա-
մէն կարգի թղթակցութիւն, դրամ եւ
այլն, հարկ է ուղղել Մասնախմբի

Հաշուակալ-Քրտուղարի հասցէին որ
է՝ Պ. Եղիշէ ԹՈՐՈՍԵԱՆ, ԳԱՀՐԷ
(ԵԳԻՊՏՈՍ)
ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՆՈՒԹԵԱՄԲ (ԿԵՒԻՔ)

ՄԱՆՈՒ. Ամերիկայի, Պուրկարիոյ
եւ Կովկասի համար վտանգելի գործա-
կարներու պէտք կայ. Դիմել վերոյիշ-
եալ հասցէին :

ԽՄԲ. — Հրատարակելու խնդրանօք
նամակով մը այս ծանուցումը մեզ զըր-
կած է Տ. Եղիշէ Թորոսեան Աւելի վըս-
տահութիւն պիտի ներշնչէր եթէ ու-
րիշ անձի մըն ալ անուր կամ ստորագր-
ութիւնը տեսնէինք նամակին մէջ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի թերթերը կը գրեն
թէ Ներսէսեան բարձր վարժա-
րանի աշակերտները տակաւին կը
շարունակեն դասադուլը, որովհե-
տե իրենց պահանջներէն մաս մը
դեռ չէ իրագործուեր :

— Արդ. քանդակի առժամանա-
կեայ թաղ. խորհրդոյ անդամնե-
րէ մին իր տունը կար կարող
յոյն աղիլի մը բռնաբարած եւ
գայթակղութեան տեղի տուած
ըլլալով, Աղաւթ Բեւէ քննադատ-
ուած էր : Այդ թաղ. անդամը
թերթին դէմ դատ բանալով 1000
ոսկի տուգանք պահանջեց : Նա-
խադատ ատեանը այդ գումարը
չափազանց գտաւ եւ միայն 100
ոսկիի վճիռ տուաւ սա հիման
վրայ թէ անհատի մը ներքին
կեանքը որքան ալ գայթակղա-
լից ըլլայ ուրիշներ այդ ներ-
քին կեանքին միջամտելու ձեռն-
հասութիւնը չունին : Մենք ալ
ճիշդ նոյն նկատումով վառնայի
Սուտիկէ Տօքթօրին վերջին նոյ-
նանման խայտառակութիւնը գրի
առնել աւելորդ համարեցինք
շատերու թելադրանքին հակա-
ռակ :

— Գահրէի եկեղեցւոյն Հոգա-
բարձութիւնը որոշեւ է պնակի

շրջաբերութեան դրութիւնը
վերցնել. բայց այս որոշումը չ
տակաւին չէ վաւերացուեր Ա-
ռաշնորդէն, որ կերեւայ թէ շատ
զբաղեալ է (1) :

— Ամերիկայի բոլոր հայաբնակ
քաղաքներուն մէջ կը շարունա-
կուի հանգանակութիւնը ի նը-
պաստ Կովկասի կարօտեալներուն.
ամէն շաբթու հոնկէ հազարաւոր
տոյարներ կը շրջուին Տիգրիսի
Նպաստամատոյց Յանձնախմբի
գանձապետ Տ. Ալեքսանտր Մե-
լիք Աղարեանցի հասցէին :

ԳԵՂՈՒՆԻ

Ի ՆՊԱՏ

ԿՈՎԿԱՍԻ ԱՐԿԱԾԵԼՈՑ




Գեղուիւն իր ծանօթ ծրագրով, ի
րեն յատուկ գեղարուեստական եւ գը-
րական բովանդակութեամբ սկսած է
հրատարակուիլ, եւ ընդ փոյթ լոյս
կը տեսնէ վեցերորդի Միթթարեան հարց
տպարանէն, Կովկասահայ մեծ զանգ-
ւաւոր փութկոտութիւն սփռից ար-
կածեալ թուրքաշայր. հիմա ինքն է
լացողը, ինքն է վերաւորուածը. եւ
ինքն է սովի եւ կրակի մատնուածը.
այդ մեր հայութեան ամենէն ազնիւ
զաւակներուն հիմա ձեռք կուտայ
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի
մնար նաեւ Գեղուիւն, որ Կովկասա-
հայուն սրտին մէջ համարականքի
բաժին մունի : Ա. Ղազար որոշած է
1000 օրինակ Գեղուիւնի (1906) փու-
թացնել թիֆլիզ ի նպաստ Կովկասա-
հայ արկածներու յանձնաժողովին.
ընդհանուր հայութեան այն ամէն ան-
հատ որ տառապեալներու գանձա-
նակին մէջ համեստ գումար մը—10 Քր.
նետեղու կարողութիւն ունի. ցան-
կալի է որ զիմէ այդ յանձնաժողովին
ուսկից փութարէն իր բարեգործութեան
կը ստանայ նոր հրատարակելի Գե-
ղուիւն, որուն կատարելութեան հա-
մար թերթին միւլտիպլիկացիան
ամէն ճիշդ ու ջանք կը թափէ եւ աւե-
լի եռանդով :

«Գեղուիւն»ն այս անգամ եւս ունի
յայտարարութեանց բաժին, որուն
մասնակցելու կը հրաւիրենք մեր նը-
շանաւոր ամեն կարգի վաճառական-
ները :

Գեղուիւնի բաժնեգիրն է 10 Քրանգ.
Գեղուիւնի համար լուսանկարներ,
յայտարարութիւններ եւ նամակներ
յղել մեր սովորական հասցէին :

Էմբրիմարի Արմէնիւն
Ս. Ղազար Վրնիզ
(Իրալի)

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ



Աղքատախնամ Ընկերութեան գործ.
ժողովս՝ մարտ ամսոյ մէջ շնորհակա-
լութեամբ ստացաւ հետեւեալ ռուբ-
րատութիւնները պատուարժան ազ-
գայիներէ ՝

Այրի տիկին Յ. Էսաեան իւր հան-
գուցեալ մօր Տիկին Սօֆիկ Յովսափ-
եանի յուղարկաւորութեան առթիւ փո-
խան ծաղկեպսակի Ծր. 50

Տիարք Կարապետ եւ Մկրտիչ Յո-
վսափեան փոխան ծաղկեպսակի Քը-
րանք 30

Տէր եւ Տիկին Խաչիկ Տումատեան,
փոխան ծաղկեպսակի, հանգուցեալ
այրի տիկին Սօֆի Յովսափեանի յու-
ղարկաւորութեան առթիւ Քր. ոսկի 20

Տ. Ռաֆայէլ Գարապաշեան
Ս. Ջատկի առթիւ Քր. արծթ. 5

Տ. Կարապետ Եաղմաճեան
Ս. Ջատկի առթիւ այցելութենէ
զերծ մնալու համար Քր. արծթ. 5

Տ. Ասատուր Փափազեան նոյն-
պէս այցելութենէ զերծ մնա-
լու համար Քր. արծթ. 10

Տ. Արշակ Փաշայեան իր անո-
ւան առթիւ Քր. 2

Տ. Անդրանիկ Շիշմանեան
Ս. Ջատկի առթիւ Քր. 2

Տ. Սարգիս Քիւրտեան
Ս. Ջատկի առթիւ Քր. արծթ. 10

134

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Զարպիսեան Ս. Սամուէլեան
1906 մարտ 29
Վառնա

Մուրատ՝ միտարի մը վրայ իյնալով :

— Զե՛ս ի՞նչեր :

— Կը ի՞նչե՛մ, կը ի՞նչե՛մ . . . յիսուն
ուրիշ լիբայ :

— Ե՛րբ եղած է այդ պարտքը :

— Աստուած գի՛տէ, զաւա՛կս, հա-
ռաչեց Ռէս Մուրատ :

— Երիտասարդը չը կրկնեց հարցում-
ները, նկատելով որ թշուառ ծերունին
մահուան գոյն մը կ'առնէր ու բոլոր
մարմնովը կը սարսուռ : Պահ մը մը-
տածեց : Յետոյ ձեռքը հօր ուսերուն
վրայ դնելով, ըսաւ .

— Ի՞նչու այդքա՛ն ցաւ կը զգաս ես
ողջ ըլլա՛մ, հա՛յր, հարկա՛ւ Աստու-
ած կարող է բարի դուռ մը բանալու
մեր վրայ : Ո՞վ է որ պարտք չունի...

— Ա՛խ, սիրելի զաւա՛կս, ընդհատեց
Ռէս Մուրատ լալակութեամբ չնշտով մը.
չէ՛, չէ՛ք՝ ուղեք որ իմ կրակիս մէջ
իյնայիք, չէ՛ք՝ ուղեք որ վրայիս սեւ
օձու շապիկը դուն ալ հագնէիք . . .
ահա՛ ջաւա :

— Պարտականութիւնս է՝ ըսու բա-
րեքներու տեղ աշխատիլ . . . Այս-
քան ժամանակ քրտնք թափեցիր ին-
ձի համար, միթէ ապերախտ պէտք է

գտնուիս Ամենեւի՛ն : Վաղը կերթամ
քաղաքը, կը ներկայանամ այդ Շիր-
վանեց Գարբէլ Աղային ու կտաջար-
կեմ որ մորհակը փոխանակագրի մը
վերածուի . . . չըլլա՛մ :

— Մուրհակը փոխանակագրի մը վե-
րածուի՞ . . .

— Այո՛ :

— Յետո՛յ . . .

— Յետոյ քանի մ'ամիսէն Կ. Պոլիս
կ'երթամ ու կը վճարեմ :

— Ի՞նչ կըսես, զաւա՛կս, կը մեղու-
նեմ քիս :

— Ի՞նչ կայ որ . . . միշտիկ ես չեմ
այդ ճամբան ինկողը, հա՛յր իմ, դուն
լայի պահէ՛ սիրտդ :

— Հապա նշանածդ . . .

— Է՛հ, հարսնիքը կընեմ . . . ա՛հ ի՞նչ
ետքը կը մեկնիմ :

— Ի՛նչ Մուրատ հեկեկանքով մը զաւ-
կին վիզն ինկաւ ու պաղատեց .

— Զէ՛, որդի՛ս, չէ . . . ձեռքովդ
հողը զի՛ր զիս ու անանկ բաժնուիք ի-
նէ :

— Բայց, հա՛յր, կա՛յ ուրիշ միջոց
մը . . . առաքեց երիտասարդը : Զէ՛
որ քանի մը օրէն փողոցին մէջ պիտի

մնանք, Ո՞վ կը բռնէ մեր ձեռքը . . .
ո՞վ կը գծայ մեր վրայ :

— Զչմարիտ է. մէկը չը բռնէր մեր
ձեռքը, մէկը չը գծար մեր վրայ, կրկնեց
Ռէս մուրատ : Կուրախանա՛ն, ա՛խ,
կուրախանա՛ն . . .

— Ուրե՛մն . . . աւելի պատուաւոր
չէ՞ առաջարկութիւնս :

— Պատուաւոր է . . . բայց նայինք
խնամի Աւետ կընդունե՞՞ որ դուն ա-
մուսնանալէդ ետքը մեկնիս :

— Խնամի Աւետ չկրնար իմ կամքիս
վրայ բռնանալ . . .

— Ի՞նչ գիտնամ . . . տարօրինակ մէ-
կըն է ան . . . կե՛նէ խնդրի կը հա-
նէ այդ մասին :

— Ես անոր ալ առաջուց կըսեմ, Ե-
թէ չընդունէր, այն ատեն բարով վա-
յելէ աղջիկն . . . ինձի համար չէ :

— Տեսա՛ր, որդեա՛կս, իրաւունք
ունիմ ըսելու թէ՛ «Վրայիս սեւ օձու
շապիկը չէ՛ք ուղեք որ դուն հագնէ-
իր . . . »

— Կը վշտանամ, հա՛յր, եթէ կրկնե-
լու ըլլաւ : Այնպիսիքս մէջ Աստու-
ծոյ եւ քեզի պարտական եմ : Պէ՛տք

է սիրով կատարեմ խղճիս վրայ ծառ-
ացած պարտականութիւններս : Ո՛հ,
այս յարկին տակ ճիշդ քան տարի է
որ դուն եղած ես իմ բովանդակ կեան-
քս : Այսօր երիտասարդութիւնս թո՛ղ
հողը մտնէ, եթէ այդ ջնջին մուր-
հակը չը կարենայ վճարել . . . :

Ռէս Մուրատ այս անդրդուելի ու
միանգամայն որդիական վե՛ն կամքին
հանգէպ սահմուկած մնաց : Հետեւաբար
երեսի վրայ ինկաւ ու սկսաւ հեծկլտալ
Ո՛հ, դառն էր իրեն իր մէկ հատիկ
զաւակէն հեռու ապրիլ . . . : Երկու
տարի է ի վեր աշխատելու անկարող
եղած էր : Ո՞վ պիտի նայէր զինքը ե-
թէ Աւետէնց աղջիկը չտային . . . :

Բոլոր գիշերը չը քնացաւ : Առտուն
խնամի Աւետին գնաց ու յայտնեց ե-
ղելութիւնը : Բարի մարդ մընէր խը-
նամի Աւետ, սիրով ընդունեց ու սիրտ
տուաւ :

(Շարունակելի)

Ի Խ Թ Ա Ր

Ս. Զատիկ միևնապեթի իւն քէօյլէրտէն գասապարա էնէն ապօնէլէրմիզին կազէթա պօրճարընը կէօնտէրմէլէրի ըէճա օլունուր :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Թիւրքիանըն էվրոբա գըթաւ սընտա հայկանլարտան մաստա ինսանլարտա տախի վէպա (ժանտախտ) իլլէթի քիյիհէսի զուհուր իթտիկինի պիր չօգ կազէթալար պիտիտիլէր խոի, ֆազաթ ըՍթանպուլտաքի պէյնէլմիլէլ սըհհիյէ գօմիսիօնը իճրայի թէտգըգաթլէ մէզքիւր վէպա իլլէթին տէն էսէր օլմատըղընը իլան իթտի :

— Պուլկար վէ Աճէմ սինօրլարը գօրգուլը օլտըղընտան նաչի, էէրոբա վէ Ասիաի օսմանիէտէ պուլընան ասքէրլէրի հարպ հալինտէ պուլընտըրմայա իրատէ սուտուր իթտիկինի վէ թէրահանէ նաղըրը Զէքի բաշա 350,000 ասքէրին հալընըզ պիր իշարէթ իլէ հարէքէթէ հաղըր օլտըղընը Սուլթանա իֆատէ իթտիկինի թիւրք կազէթալարը եաղիյօրլար :

— Թիւրք վէ Պուլկար մուխթէլէթ գօմիսիօնը մախսուս Պապը Ալիտէ Հասան Ֆէհմի բաշանըն ըէյասէթի ալթընտա թիճարէթ մուգալէլէնամէսինի թէտգըզ վէ թէրթիպ իթմէքլէ մէշղուլ տըր : Հայկանաթ իտխալի իչիւն թիւրքլէրին սինօրը գաբամասը պու մուգալէլէնին պիր ազ ուզուր սիւրիւնէճէկինէ սէպէպ օլաճագ կէօրիւնիյօր : Տէր իքի թարաֆըն թիւճարլարը մէսէլէնին նէյէ միւնճէրը օլաճաղընը սապըրսըզճա պէքլէմէքտէ տիրլէր :

— Սթանպուլտա պուլընան Պէտըրհանը Գիւրտլէրտէն չիմտիյէ գատար 300 էրքէկ վէ գատըն մէնֆի հօլլանըլմըղլար վէ էլան հիւքիւմէթ թուլթըլանը սիւրմէքտէ իմիշ : Պէտրհանըլարա գարըզ պու տէրէճէ ումուժի թաղիպաթ Ալի Շամիլին պիր գաշ թէհտիտի սէօղլէրի սէպէպինտէն իլէրի կէլմիշ իմիշ : Ալի Շամիլ Նըլտըղտա քէնտիսինի իսթինթագ իտէն մէմուրլարա շէօյլէ սէօյլէմիշ :

Անուլթմայընըզ քի պէն պիր Պէտրհանըլմ վէ պէնիմ 90,000 քիւրտլէրիմ վար տըր քի ինթիգամըլմը ալաճագլար :

Պուլկար իւզէրինէ Սուլթան Ապտիւլ-Բահման վէ Սայիտ բաշալար իլէ միւզէքէրէ իթմէսինտէ պուլընար սըզը թէտպիլլէր իթթիխաղը իչիւն էքքէար պէյան իտէրլէր : Ս տաղիգատէն պէրու րասթ կէլէն քիւրտլէրի

թուլթուպ սիւրկիւն իտէյօրլար : չիմտի հիշ պիր քիւրտ մէմուր գալմամըշ : քիւրտ գաբուճըլարը վէ ըէչպէրլէրի տախի Սթանպուլտան էյսիլթմէք իսթէնիլիյօր :

Մալիւմ օլտըզը իւզրէ, մէշհուր Պէտրհան բաշա վան վէ Տիարպէքիւր վիլայէթլէրինտէ բէք գուլվէթլի պիր քիւրտ պէյի իտի : Հաքքէարի սանճաղընտա խրիսթիանլարը գըրան վէ գըրտըրան Պէտրհան ըտը, 1846 տա նամտար Շէյխ իպատուլլահ իլէ պիրլէչէրէք, «Սէրպէսթ Գիւրտիստան» իլան իտուպ, օսմանը տէվլէթինէ գարըզը ըսեան պայրաղը չէքմիշ իտիլէր :

Պու քիւստահլըզ իւզէրինէ Օսմանը տէվլէթի պիր ազ թէհտիտ վէ պիր ազտէ գուրնաղըզլէ Պէտրհանը Սթանպուլա կէթիւրուպ, Անտաօլու գըթապընտա քիւրտ ըսեանընը թէսքին իտէպիտի :

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Սօֆիայա կիթմիշ օլան Բուճանիա մուհանտիսլէրի բէք շաշալը սուրէթտէ գարըզլանտըլար ագշամ տախի անլէրին շէրիֆինէ ասքէրիյէ գիւպիւնտէ 270 քիշիլիք պիր զիյաֆէթ քէչիտէ օլընտը : զիյաֆէթտէ Սօֆիա պէլէտիյէ Բէյիսի վէ Պուլկարիա մուհանտիսլէրի պուլընուպ, իքի թարաֆտան իտարէի ագտահ վէ իքի միլլէթ պէյնինտէ տօթըլըղընըգալիլէչմէսինի թէմէնի իթտիլէր : Պուլկարիա վէ Բուճանիա օրտուլարը չէրիֆինէ վէ Մաքէթոնիանըն գուրթուլմասը իչիւն պատէլէր իչիլտի : Էրթէսի ագշամը տախի Բուճէն մէքեալէսինտէն ալընան պիր թէաթրօ վէրիլտի :

Բուճէն մուհանտիսլէրի չարշամպա կիւնիւ բօսթա թըրէնի իլէ Բլէվնայա կիթտիլէր : սթասիօնտա միսաֆիրլէր Պուլկարիատա քէնտիլէրինէ օլան հիւսնի գապուլտան տօլայը պէյանը թէչէքքիւր իտուպ, Պուլկար մուհանտիսլէրինի եազընտա Պուզրէշտէ կէօրմէք արզուլընը արզ իթտիլէր : Պուլկարլար պու սէնէ Յուլիս ալընտա Պուզրէյէ կիտէճէքլէրինի պիտիտիլէր :

Իքի գօնշու միլլէթլէրին պուլեօլտա վիզիթալար մուպատէլէ իթմէլէրի, եազընտա իքի հիւքիւմէթ պէյնինտէ բօլիթիգի իթիլաֆլար հուսուլա կէլէճէկինի կէօթէրի : «Մաքէթոնիանըն գուրթուլմասը» իչիւն Բուճէնիլէրին թէմէնիաթտա պուլընմասը իլք տէֆա իչիտիլտի : պու մանէսիղ տէկիլ տիր :

— Սօֆիայա կիտէն 28 նօմէրօլը թըրէն մարտ 26 տա Պալըն—էօմէր քէօյլէնտէն իքի եաշընտա պիր թիւրք չօճուղը էզմիշ տիր : — Այտօս գազասընըն Ենիմա-

հալլէ նամ քէօյտէ Հիւսէյին նամ պիր թիւրք քէնտի Մուրատ վէ Մէհմետ նամ գարտաշարընտան գաթլ օլընմըշ : Մուրատ թուլթուլմուշ : տիկէրի գաշմըշ տըր : Գէնտի էօզ գարտաշընը էօլտիւրէն ատամլարտան նէ էյլիք պէքլէնիլի :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկտա «Եիկիրմինճի» տըրը նամ պիր պէօյիլկ կազէթա նէշը օլընմայա պաշալտը : իշպու կազէթա «Սլալլարըն պիրլէշմէսի» մէպտէսինտէ խըզմէթ իտէճէք տիր, եանի Բուլար, Լէհլէր, Աստրիատաքի սլալ գապիլլէր վէ շարգտաքի, Պուլկար, Սըրպ վէ սայիր Սլալ միլլէթլէրի հիւքիւմէթի միւնթէմա (Միսյա-եալ կառալարուլթիւնեք) սուրէթի իլէ, Միւնթէմէալ, Ալմերիկա կիպի իթթիհատ իտէճէքլէր իմիշ :

— Բուսիատա իսլամ հօճալարընա վէ մէքթէպլէրինէ խրիսթիանլար կիպի մէզուրիյէթլէր վէ հազար վէրիլմէսի պապընտա մէարիֆ նաղըրը Ենի պիր էմիր-նամէ չըգարմըշ տըր : Շու հալտէ զիյարէթի օլան իսլամ հօճալար Ժիմնաղիլարտա տէրս վէրէպիլէճէքլէր, վէ միւնթաճ օլան իսլամ մէքթէպլէրինէ հիւքիւմէթ խաղինէսինտէն իանէ վէրիլէճէք տիր :

ԱՃԷՄԼԷՐ ՎԷ ԲՈՒՍԼԱՐ

Կալկասիատան պիր պէօյիլկ միւսլիմանլար Աճէմլէրի Բուսլարա գարըզ թէշվիգ իթմէքտէ օլուպ, էն չօգ նէշը օլընան իքի պէօյիլկ աճէմ կազէթալարընը տախի էլտէ իթմիշլէր : պու կազէթալար չիմաի Բուսլարըն իսլամլարա վէրտիքլէրի զարարլարը վէ զուլումլարը կէօթէրմէկէ պաշալմըղլար, իշպու հալա-տիսի Բօսք նամ Ալման կազէթա-սընըն թէհրան մուսպիլի վէրմիշ տիր : Բուսլար չիմտի տօթլարընը վէ տիւշմանլարընը անլայաճագլար :

ՎԷՍՈՒՖ ԵԱՆԱՐ ՏԱՂԸ

Պիր վազըթտան պէրու իթալիտաքի նամտար Վէսուվ եանար տաղը թէքրար աթէշ թաշ վէ լալա Ֆըշլըրմայա պաշալմըշ տըր : Սէքքիւր տաղըն էթէյինտէ վէ եազընլարընտա քեաին քէօյլէրտէն էհալի գաշմըշ տըր, զիրա տաղտան էնմէքտէ օլան լալա սէլի պիւթիւն օլայը իհաթէ իթմէքտէ տիր : մալ վէ միւլք խասարաթընտան մաստա չօգ ինսան թէլէֆիաթը տախի օլմուշ տըր :

Նաբօլիտէն ալընան պիր թէլէկրաֆ տէյօր : Վէսուվ եէնիտէն լալա բիւսկիւրմէյէ պաշալտը : գօյու սըճագ քիւլ եաղիյօր : Պուլուտար գարտըզ գրգարիյօրլար : Սան Ճօրճինին վէ տիկէր պիր գասապանըն քիւլ իլէ էօրթիւտիկի վէ 400 քիշի թէլէֆ օլտըզը սէօյլէնիլիյօր : պու գասապալարըն պիւթիւն ինսանլարը գաշիյօրլար : Նաբօլիյէ կէլէնլէր 4 կիւնտէն պէրի աճ օլտըղլարընը սէօյլէյօրլար :

ՍՈՒԼՀ ԳՕՆՖԷՐԱՆՍԸ

Բուս խարիճիէ նաղըրը Մ. Լաւրտօրֆ Բէթերսպուրկտաքի էճնէպի էլիլէրինէ իքիւնճի Սուլը Գօնֆէրանսըն բօկրամը թէպիլի իթտի : իշպու բօկրամըն միւնտէրէճաթը մուլթասար սուրէթտէ կազէթալարտա կէօրիւնտիկի իւզրէ, Գօնֆէրանստա պաշլըճա էսնաի մուհարէպէտէ տիւշման տէվլէթլէր էճնէպիլէրլէ նէ Եօլտա տալրանմալը, տէնիզտէն նէ թարգտա իլիմանլարը իհաթէ իթմէլի վէ շուսա տայիր պիր թագըմ մէսէլէլէրլէ մէշղուլ օլընաճագ ըմըշ :

Մաղլում վէ Եէսիր ճէմաաթլարըն հուգըզընա ինսանիլէլէրինին թէմինի իչիւն հիշ պիր լաֆ Եօգ տըր :

ԹԻԻՃԱՐԻԷ

Զախիրէ վէ պաղալիյէ մալլէրին ֆիաթլարը թէպէտտիլաթ պուլմամըշ տըր : Եանի կէչէն ճուճա էրթէսի կիւնքի նօմէրօմըղտա կէօթէրիլէն ֆիյաթլարըն ալըն տըր :

Եուճուրթա 100 ատէտի 4.60

ՍՐԱՀ «ՍԱԷՏԻՆԷՆԻԷ»

Պատիւ ունինք ծանուցանել Վառնայի արգօ հասարակութեան, որ Զատիկի երեկօրեայ տօներուն լաւ ժամանց մը ընծայելու համար, այս անգամ Պօլսէն հանրածանօթ կատակերգակ Ճուզէթէ Սերվիօր խուճըզ հրաւիրեցինք, ներկայացնելու համար Ֆրանսերէն եւ իտալիէն լեզուա խիստ զաւեշտապէս Վօտվէլներ եւ կատակերգութեաններ : Կատակերգակ պ. Տէրիգօ վերջերս Պօլսոյ բեմին վրայ իր շնորհալից համբաւով, — Կատակերգութեան — ճիւղին մէջ Գօքլէնը յիշեցնելով — իրաւամբ ամբողջ մամուլը գովեստին առարկայ եղաւ : Բացառաբար մի քանի ներկայացումներ տալու մեր առաջարկութիւնը ընդունելով, յուսով ենք որ Վառնայի հասարակութիւնը այս բացառիկ առիթէն պիտի օգտուի :

Մտից տոմսակնիքը այսօրուէ կը վաճառուին Սրահ «Պուլկարիա» :

Դին ըէզըրվա 2 ֆր. Ա. կարգ 1.50 ֆր. Բ. կարգ 1 ֆր. :

Տնօրէնք

ՄԻՀՐԱՆ ԵՎ ՀՐԱՆՏ

Одговорились А. Курбетиянъ
съобщая а Д. Тодоровъ и С.не—Варна